

չա, այդ անթիւ կը պատմէի նշանակալից մանրագէպ մը . որ մը Սուլթանը, Պոլսոյ պապական պատուիրակ մտնտիննոր Պանէթթիին շը-նորհած մէկ ունկնդրութեանը միջոցին, երկայն բարակ կը գովէր կաթոլիկութեան մտնութիւնը եւ պապութեան փառքը, « այնպիսի աւելնով մը որ մտնտիննորը խորպակ յուրած էր : Տեսակցութեան աւարտէն յետոյ, երբ Միւնիի փաշա, եկեղեցականը մինչև զուրը առաջ-նորդելէն ետքը Սուլթանին մօտ դարձաւ, « Ապո՛ւշը : ըստ խալիֆան քահ քահ խնդալով : թուր ըստմնելու կ'լիցք, մինչև անգամ աշուրները լիցուած էին յուզմունքէն . . . » :

Սուլթանը կ'արհամարհէ քրիստոնեաները : Բայց ա՛յ աւելի՛ ուրացողները . ասոր պատճառը թիրեւս այն է որ աստնով քրիստոնեայ ծնած եւ ետքէն փայտութիւն ընդունած սիրելի մը ունեցաւ, ժողով Արթութարքի, փայլուն երթոտասարգ մը : Բայց մուլթիւններով փոտած, եւ որ Տէնբրի ամենէն մեծամուռն ընտանիքներէն մէկուն կը պատկանէր . մահմե-ծական ըլլալով՝ ա՛յնքան քահանճոյքի մը գոհացում տալու որքան Ապտիւլ-Համիտին հաճելի ըլլալու համար, անոր թիկնապահը եւ զաւ եւ Սէյֆուլլահ անունն առաւ, եւ այսօրէն շատ պաշտօնի դարձաւ շնորհիւ այն վարկին գոր կը վայելէր իր տիրովը հանգէպ՝ այն տեղեկութիւններուն համար գոր ունէր ալքի-միագիտութեան, աստեղագիտութեան, մոգութեան եւ ուրիշ ծածուկ գիտութեանց մասին որոնցմով բատիշար պատանի հասակին սըլու-նով սեծնպէս նետարգրբում է : Ի վերջոյ, լուր ելլելով թէ Սէյֆուլլահ իր պաշտպանին դէմ դաւ մը կը սարքէր, գործերը իրեն հա-մար պէշ ընթացք մը առին, Պեռնպաղի աքսորուեցաւ, ուր բաւական խորհրդաւոր մահ մը ունեցաւ :

(Շարունակելի) ծՈՐԺ ՏՈՐԻՍ



ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ

Ե . . .

Ս. Մերրոզութեան եկեղեցիի աւագերէցը տաներէցն էր հարուստ գասակարգին : Արդէն կատարեալ ազնուարեւ շուրթազրծուելու մէկ էական պայմանն էր Տ. Մկրտիչը տաներէց ունենալ, առանց ասոր շատ վաւերական չէր նկատուեր ազնուականութիւնը : Ազնուաըը քանալով վրայ եղող ընտանիքներ անհամբը

կը սպասէին իրենց հէն տաներէցին մեծնելուն որպէսզի տեղը Տ. Մկրտիչը տանէր : Ատոնց երբ հարցուէր թէ՛ ո՞վ է իրենց տաներէցը, չփութած՝ դրեթէ կարմրելով կը պատասխանէին .

— Շիրտակը կ'ուզես նե՛ : Տ. Մկրտիչը պիտի ըլլայ, բայց հիմա կուհիմա Տ. Սահակն է . . . չվտաւ որ մէյմը աղաւտիկնք :

Ու շատը, յուսանաւ իրենց քահանային մեծնելէն, որոշած էին թէ՛ անկիպ պահել եւ թէ՛ Տ. Մկրտիչը տաներէց ընել : Այս պարագային՝ տօնական օրերուն՝ Տ. Մկրտիչ սալօնը կ'օրհնէր եւ միւսը՝ սպասաւորներու գետնա-յարկի սենեակը :

Բայց բաւատիկներնոր մեծամտութիւնը առով չէր բաւակնանանր . ցանկութեան, փառասիրութեան ուրիշ նպատակակէտ մը կար որուն հասնիլ շատ աւելի դժուար էր : Ազնուաշուքներու քահանան իր ծուխերը բաժնած էր երեք դասի գորոնք Մննդին ու Ջատիկին կը հովուէր կարգաւ : Առաջին օրը բարձրագոյն զասի աղնուաշուքներուն յատկացուած էր, երկրորդ օրը՝ միջին զասի եւ երրորդ օրը՝ ասորին զասի : Երեւակայեցէ՛ք ամօթալից վիճակը այն հէր տանտիկնոջ որուն սալօնը Ջատիկի երեքչաքթի օրը կ'օրհնուէր, մինչդեռ կա- յին գերերջանիկ արարածներ որոնք « Տէր Սը- կրտիչը տունօրհնէքի եկա՛ւ » ըսուած աստի կրնային հպարտութեամբ պատասխանել .

— Ի՛նչ ըսել է . հէլպէթտէմ քի եկաւ, ար- ղէն՝ չիյտէ՛ք՝ մենէ կը սկսի նե՛ . . .

Ի՛նչաղայանքեր, ի՛նչփաղաքշաքներ կ'ըլ- լային տաներէցին, երրորդ կարգի ծուխերուն կողմէ, գոնէ երկուշաքթի վերածել ետալու համար իրենց օրը՝ բայց այդ մասին տնողք էր Տ. Մկրտիչ :

— Անկարելի է, կը պատասխանէր, ստե- բակին մէջ ինչ որ նշանակուած է՝ ան կ'ըլլայ, պարսպ տեղը մի պնդէ՛ք՝ կը բարկանամ :

Տ Մկրտիչ հայր կը սերուէր իր ծուխերէն մահաուորպակս խոտովանանքի մասին իր ներողամտութեանը համար :

— Ե՛ղբ աղէկ խոտովանանք կ'ընէ, բնաւ հարցում չ'ըներ ու չուտ մը արձակում կու- տայ, կ'ըսէին իրարու կիները, որոնք իբր թէ կարող ըլլային դժուարախոտովանելի մեղքեր գործելու :

Իր հարուստ ծուխերուն շնորհիւ Տ. Մկրտիչ քահանաներուն մէջ փայլուն վիճակ մը ունէր, նոյն իսկ եպիսկոպոսնի կային որոնք եւ նախնիներ իր վրայ : Բայց Ի Ջատիկն ու Մննդի հաստատ նուէրներէն, Տ. Մկրտիչ ծուխերէն ստակ քաշելու զանազան միջոցներ հնարած էր, որօնց մին էր իր հեղինակած աղօթա-

գիրքները ծախել անոնց սուղ սուղ գիներով, կամ երևակայական աղքատներու ի նպաստ հանդամակութիւն ընել, կամ սասակ հաւաքել օժիտ պատրաստելու համար աղջիկներու ուրոնք թէկու գոյութիւն չունէին բայց այսօր հանդերձ պիտի ամուսնանային «պարկեշտ եւ աղքատիկ» երեսասարդի մը հետ, եւն։

Տ. Մկրտիչ (գործի մարդ) քահանան էր որ կրօնաւորութիւն կ'ընէր քանապաստութիւն ընելու պէս, Իրեն համար կրօնքը խոշոր խաւով մըն էր. տունօրհնէք, խաչահանգիստ, խոտովանանք, նշանուք, կնուէք, հաղորթիւն, ակետարան, բարի խրատ, կշտամբանք, թաղում, հարսնիք եւն. ապրանքներ էին զորոնք պէտք էր կարելի եղածին չափ սուղ ծախել եւ միշտ ջանալ առաջ աւրուածները քնելու։

Հպարտ ու ամբարտաւան իրմէ տկարներուն հետ՝ Տ. Մկրտիչ ամենէն գեհնաքաջը սողոսկուններու ունէր հարուստներուն զիմացը եւ այս էր անոնց մօտ իր յաջողութեան զլիսաոր պատճառը, կեղծաւորութիւնը, կեղծաւորութիւնը արուեստի մը նրբութիւններուն հասուցած եւ իրականէն դիտար ըրած էր այդ ճիւղին մէջ։ Ատոնցմէ մէկն էր «սքակիր քահանայի» զիւտը։ Ամէն անգամ որ իր հարուստ ծուխերէն մին մեռնէր, Տ. Մկրտիչ փոխանակ զգեստաւորուելով պաշտօն կատարելու եւ զայն թաղելու, սեւ շալ մը կը փաթթէր վզին շուրջը. «աւուր պատաճախ» լալկան կերպարանք մը կ'առնէր ու եկեղեցիին դասը կեցած եղբերակական հասարակութեան կ'արձակէր։ Փողոցն ալ, փոխանակ միւս քահանաներուն հետ քալելու, դազաղին ետեւէն կ'երթար, իբր թէ մեռնողին հայրը, եղբայրը կամ սղան ըլլար։ Ասով թէ՛ արարողութեան յոգնութիւններէն կը փրկէր ինքզինքն եւ թէ՛ ցած չողորթութեան ցոյց մը ըրած կ'ըլլար մեռնողին տէրերուն։ Հետեւեալ օրը թերթերը, թաղման հանդէսի նկարագրութեան մէջ կը գրէին. «Տ. Մկրտիչ սուղ քահանայ Յովհաննէսեան, որ հանգուցելոյն բարեկամն ու տանիքէն մէջ միանգամայն, ոչ զգեստաւորեալ, իբրեւ սգակիր կը հետեւէր դագաղին, խորապէս յուզեալ»։

Հարուստ ընտանիքներու հետ մշակած յարաբերութիւններուն շնորհիւ զերազիւր զիրք մը ստացած էր Ս. Երրորդութեան եկեղեցիին մէջ ուր նոյն իսկ քարոզիչ վարդապետ կը վախնար իրմէ։ Ժամօրէն, տիրապետ կամ բարապետ, որոնք միւս քահանաներուն հետ անե-

րես կողատու թեամբ կը վարուէին. կը պատկանէին աւագերէցն։ Տ. Մկրտիչ առիժի բաժնիք կ'առնէր բանկալի այն ամէն հասցոյթներէն որ սահմանուած են պաշտօնեաներուն մէջ բանուելու։ Այսուհանդերձ իր անյայտ դրամաւորութիւնը միշտ զօգո՛ր կը մնար, եւ յաճախ անիրաւուած, կողոպտուած մարդու վայնասուններ կ'արահալէր երբ իր զաւակացն պահանջկոտութեան մասին դատողութիւններ ըլլային թաղական խորհրդին կողմէ։ Դրամական խընդիրներու մասին իր կռիւները շատ անգամ Բերալի մէջ օրուան զէպքը կը զանախին ու կը պատահէր որ նոյն իսկ թերթերը զբաղէին ատով։ Այդ պաշտօններուն մէջ իր մշտնջանական ախոյեանը, անողոք թշնամին էր Արմէն Կուլեան։ Ամէն թաղումի կամ հարսնիքի հաշուեյարգարութեան միջոցին անխուսափելի ընդհարում մը պիտի ըլլար այդ երկուքին միջև։ Հակառակութիւնը որ այսպէս աստի աստի կը պայթէր, միշտ գոյութիւն ունէր թաղուն վրեժակի մէջ։ Երկուքն ալ, ամէն օր, ամէն ժամ, անընդատ, սրտմաշուք զգուշաւորութեան մը մէջ կ'ապրէին զիրար գիտելով, զիրար լրտեսելով, միշտ մատանջ թէ՛ արեօք զիմացիրը ինչ զարան շարեւռ վրայ է իրեն զէմ, կամ ինչ պղտոր շահագործման կ'ընէ ինքն իր զլիսուն։ Եւ իրաւամբ Տ. Մկրտիչի համար Կուլեան ամենէն զօրաւոր ու երկիւղալի մրցակիցն էր։ Իրեն չափ խորամանկ ու ծածկամիտ, իրեն չափ հանած - վարած, Արմէն Կուլեան բարձր դասուն հետ ունեցած յարաբերութիւններով ու ազգային շահեանակներու մէջ վայելած ազգեցութեամբն ալ կ'ընար մրցել Տէր Մկրտիչի հետ։

Ընդդիմամարտ շահերէ ծագած այդ հակառակութիւնը միշտ յայտնաբերուեալ անստակացեղ էր որ ա՛լ բացարձակապէս իրար կ'ատէին։ Տ. Մկրտիչը մանաւանդ՝ ամէն անգամ կատաղութենէն գրեթէ հիւանդ կ'ըլլար երբ կ'իմանար Կուլեանի մէկ կ'նոր շահատակութիւնը այն գործերուն մէջ որոնք կը կարծէր թէ միմիայն իր մենաշնորհներն էին։

Հիմա կ'երևակայէք իր բարկութիւնը երբ Ռոտոսթոյնէ վերադարձին Ս. Երրորդութեան բանկալը մտնելով իմացաւ Սարգսյանքեանի նշանուիլը օրիորդ Կերմերեանի հետ, Կուլեանի միջնորդութեամբ։

—Գոնէ թիթը թող այդ ամուսնութեան գործերուն մէջ չխոթէ, պատշաճ զողանար. անամո՛թ մարդ, ձեռքէն դա՛ն է վաղը խորանին վրայ

ելլայ պատարագ ալ պիտի ընէ , հաղորդու-
թիւն ալ պիտի տայ :

—Է՛հ , ի՞նչ կ'ըլլայ , պատասխանեց գիււ-
նապետը որ հանոյք իր զգար քահանան զըր-
գրուէն , արդէն Կուլեան էֆէնտին աշխարհա-
կան վարդապետի մը կը նմանի :

—Վարդապետ մի՞... քթէն բերնէն բերել
պիտի տամ այս ըրածը... ա՛լ բաւական է , ա-
նա՛թ' Թ' մարդ , անօրէն' մարդ , միլուրիթ շուն-
շանորդի :

Եւ քթին տակէն շարունակելով հայոյոյանը-
նէրը Կուլեանի հասցէին , մեկնեցաւ եկեղե-
ցիէն :

Տ.Մկրտիչ տուն հասաւ հետզհետէ աւելի
դրդուած : Իր մրցակցին ոտնձգութիւնները
իր ծուխերուն մէջ , ա՛լ բոլորովին համբե-
րութիւնը սպսոսած էին :

—Այս մարդուն հախէն գալու է , կը մըրըլ-
տար ինքնիրեն սեննակը քաշուած :

Ու մինչեւ գիշեր հազար տեսակ միջոցներ
մտքին մէջ պտտցուց Կուլեանի ձեռքով պատ-
րաստուած նշանուէր քայքայ' լու համար եւ
այն ատեն միայն հանգստացաւ եւ կարող եղաւ
քնանալու երբ գործադրելիք եւ յաջողութեան
հուսանականութիւն ունեցող ծրագիր մը յղա-
ցաւ :

Հետեւեալ օրը , կէսօրին մօտ , Տ.Մկրտիչ
կը ներկայանար Կերմերեանց տունը . սպա-
սուհին հարկէ դինքը հիւրասենեակ մտցու-
ցած՝ տանիւնէջը խորխտ , հրամայական շեշ-
տով մը ըսաւ .

—Հանըմի՞ք ըսէ , շո՛ւտ թող դայ , ըսելիք
ունիմ :

Տիկին Կերմերեան վաղեց եկաւ ուրախ զը-
ւարթ ղէմքով մը , ինչպէս կը վայլէ աղջիկը
նոր նշանած մօր մը :

—Աչքի լոյսի՞ եկար , գոչեց սենեակին դուռ-
նէն Տ.Մկրտիչը տեսնելով :

—Աչքի լո՞յս , ի՞նչ կայ որ , պատասխանեց
քահանան , չուղեելով զիրացած ձեւանաւ նշան-
ուէր , ընդհակառակն ես ձեզի աղէկ լուր մը
բերի :

—Է՛յ , ըսէ նայինք սա աղէկ լուրդ :

—Նախ Սաթենիկս կանչել տուր :

—Կուգայ կոր , արդէն գալիք լսեցնէ՛ խենթի
պէս իրորը ձգեց հագուելու պնաց :

Եւ որսաւ ալ նոյն վայրկեանին Սաթենիկ
ներս մտաւ :

—Եկուր սա ձեռքս պագ , աղջիկս , ըսաւ Տ.
Մկրտիչ հանդիսական ձայնով մը :

Ձեռքագրը կատարուեցաւ :

—Լուցկի մը տուր նայիմ , աղջիկս :

Լուցկին եկաւ :

—Ինչի խանութ մը ապուրդէ , աղջիկս . . .
սանկ դիտես ա՛ , շաքարը քիչ , աղէկ խայնա-
միշ եղած , թո՞ղ Մարիամը եկէ , Աւետիսին եւ
փածը չեմ կրնար կոր խմել :

Սպասուհին որ դրան մէջ կը անունար դիտ-
մամբ՝ աղէկ լուրը հասկնալու , ստիպուեցաւ
մեկնիլ խանութի պատրաստութեան համար :

—Աղջի՛կս , սանկ քովս եկուր նստէ նայիմ ,
շարունակեց Տ.Մկրտիչ :

—Ամա՛ն , տէր հայր , սա բարի լուրդ ըսէ ,
հիմա պիտի ձաթմ , գոչեց տիկին Կերմերեան ,
որուն համբերութիւնը կը սպառէր տանեւէջին
ընթացքէն :

—Ձեզի խօսք մը ունիմ , սկսաւ Տ.Մկրտիչ ,
բայց չըլլայ թէ վերջնականապէս ամէն բան
չլրացած չկարգադրուած , դուրս ելլայ հա՛... :

Այս խորհրդաւոր ներածութիւնը կրկնա-
պատկեց երկու ունկընչիքներու ուշադրու-
թիւնը , որոնք այժ ու ականջ կտրած կախուե-
ցան Տ.Մկրտիչի շրթունքներէն :

—Ես չէի՞ ըսեր որ Սաթենիկս ե՛ս պիտի
կարգեմ , առաջ տարաւ տէրտէքը յաղթականօ-
րէն ձայնը բարձրացնելով եւ աղջկան ձեռքը
իր ձեռքերուն մէջ առնելով :

Յետոյ , պահ մը Սաթենիկի ձեռքերը հայրա-
բար չփիլէ ետքը , խօսքը առաջ տարաւ .

—Անոր սնանկ փեսայ մը գտայ որ խուն-
կով մոմով զանուելիք բան չէ , հարո՛ււտու երկ-
տասա՛րդ , ուսումնական . պարկի՛նչու , խոհե՛մ
. . . ամէն յատկութիւնները վրան կան , ու սակէ
զատ , աղնուակա՛ն , մեծ ընտանիքի զաւակ . . .

Մայր ու աղջիկ , քիչ մը շփոթած , իրարու
նայեցան :

—Ի՞նչ կայ , ինչո՞ւ ատանկ իրարու կը նա-
լիք , հարցուց տանեւէջը որ նշմարած էր նայ-
ւածքներու փոխանակութիւնը :

—Ձէ՛ , բայն չկայ , պատասխանեց Թագուկ
հանրմ , միայն թէ՛ երբ եկար գեղէն . . .

—Երէկ աւտու :

—Հա՛ , անոր համար չես իմացեր որ Սաթե-
նիկս նշանեցինք . . . ներս մտար նէ՛ կարծեցի
որ իմացեր ու աչքի լոյսի եկեր ես :

—Նշանեցինք՞ , գոչեց տէրտէքը կատարեալ
զարմացումով մը , ե՛րբ , որո՛ւ , ինչպէ՞ս . . .

—Շնորհքով մարդ է , որուն ալ իմանաս նէ
զո՞ն կըլլաս . . . Սարալբլըքեան Մարտիրոս է-
ֆէնտիին հետ :

—Ամ'. Սարըպըըքեանը, ըստ Տ.Մկրտիչ արհամարհանքի հոյակապ շնչտով մը, սա Շապին. Գարահիսարցի պագ հէրիֆը որուն մայրը մեռաւ ահ... ամա՛ն Թագուկ հանրմ, աշայափ ասան սպասուցիքը ազջիկդ որ ատանկ մարգո՞ւ մը տաւ:

—Շատ չնորճով մարդ է... ամենքը գրվեալք է կ'ընեն կոր:

—Կարծ խօսք մը ընե՛մ, գոչնց տէրտէրը կըտրուկ կերպով, ատ նշանտուքը ետ պիտի ըլլա՛յ. կամ գոնէ իմ առաջարկած փեսացուս մէյ մը կը տեսնաք, չհանելք նէ, այն ատեն որս. կ'ուզէք տուէք ազջիկնիդ... ես ձեռքերս կը լուսմ, կ'ելլամ մէջէն, բայց խնդն հանդարտ կ'ըլլայ... արիւն ձեր կ'ըջօխ ձեր:

—է՛յ, ես չեմ խոտնուիք, կ'ուզեա նէ հօրը հետ խօսէ, պատասխաննց Թագուկ հանրմ որ զգաց թէ ինքն իր գլխէն չպիտի կրնար ազատել տաներէցին ձեռքէն:

Յետոյ պզկանը դառնալով՝

—Սաթինիկ, գուն ալ բան մը չըսե՛ս:

—Ի՛նչ ըսեմ, պատասխաննց ազջիկը, գեռ տէր հօրը մարդուն ի՛նչ գործ ընելը, ի՛նչ վիճակ ունենալը չհասկցանք որ անոր համեմատ կարծիք յայտնեմ:

Տ.Մկրտիչ որ իր ձուխերը հիացական շաւարման մը մէջ ձգելու միջոցնկեր պէտք հղած ատեն գործածելու մասին վարպետ էր. ոտքի հլաւ, մտոնցաւ սեղանին վրայ գրուած լամպային, բռննց, օղին մէջ բարձրացուց զայն ու ապակիին մէջէն երեւցած փեթօլը ցոյց տալով գոչնց:

—Ամ' կը տեսնա՞ք կոր. իշտէ ան մարգունն է ասիկա:

Յետոյ արևին Թագուկին դարձաւ նոյն գերասանական ձեռով եւ հարցուց.

—Գովի սենեակը լամպա ունի՞ք:

Եւ ասանց պատասխանին սպասելու շարուանկնց:

—Անոր մէջի փեթօլուն ալ ամ'ն մարգունն է, դրացիին լամբաներուն փեթիքուն ալ ամ'ն մարգունն է, Թագուկ հանրմ, հինգշաբթի որ մը Պալաթալի ժամը ուխտի չե՞ս գացած:

Թագուկ հանրմ, որ ամի ք բերան տաներէցին խօսքերը մտիկ կ'ընէր, ձայն չհաննց:

—Քիչի կ'րեսմ կոր, չե՞ս գացած, գոչնց տէրտէրը:

—է՛յ, հա՛, մեղա՛յ, գացած եմ, ըսաւ խեճը, կէս շուարած կէս ծիծաղկոտ:

—Սաթիք սոխաղին անցած ես:

—Այո՛:

—Իշտէ հո՛ն, պախաներուդ քով շարուած բոլոր փեթօլի մատուկները ամ'ն մարգունն է:

—Ռսել է ատ ըսածք մարդդ կաց կը ծախէ:

—Կա՞ց կը ծախէ, բարբօքեցաւ նորէն Տէր Մկրտիչ, կա՞ց ծախողը ձեր Սարըպըըքեանի Սարաթրոտէ է, պիտի նաւթի հորատե՛ր ք է, հորատե՛ր...:

Սպասուցին սուրճը բերած էր ։ Քաջանան նստաւ եւ լուծթեամբ խմեց որպէս զի ատեն տայ մայր ու ազջկան նաւթի հարստէքը մարսելու:

Տ.Մկրտիչ աւելի հանդարտած, երկար միկնութիւն մը տալ սկսաւ նաւթային արտագործիւնի վրայ, յիշեց շատ մը միլիոնատերերուն անուններ, բացառեց թէ ինչպէս գեանէն հարստութիւնը կը բախէր, թէ ինչպէս մարդիկ քիչ ժամանակի մէջ միլիոնատէր դարձած էին հոն, եւն:

—Ռսել է Ռուսաստանցի հայ մըն է այդ եւրիտասալըքը, ըսաւ Թագուկ հանրմ որ ք'ը ըսկըսած էր շատ ուշացիբ մտիկ ընել տաներէցին:

—Հարկաւ, հին Ղարաբաղի իշխանական ցեղէ մարդ է:

—Շատ հոր ունի՞ք եղբք:

—Հապա՛, թաք տասերկու հատ:

—Միայն թէ անոնց հայերէնը թճահֆ մընէ, բէք չի հասկցուիր:

—Ամա՛ն մայրիկ, դուն ալ ի՛նչ պարապ խօսքեր կ'ընես, պատասխաննց Սաթինիկ որ արդէն սկսած էր վատուիլ տասերկու հորերու քարեղովը, շատ ալ աղէկ կը հասկցաւ. իրու անոնց հնչմունքը մերմունք տարեր է, բայց աւելի անուշ է ես՝ շխտակը՝ շատ կ'ախորթիմ, մազքեայի պէս կուղայ ականջիկ... խօսած ատեններն կարծես թէ կ'երգեն կոր:

Ո՛վ նաւթի հորեր, նաւթի հօրեր...:

Տէր հայրը քաջալերեալ իր փեսացուին գտած ընդունելութիւնէն, ալ արեւել մանրամասնութիւններու մտաւ անոր նիւթական վիճակին մասին:

—Աղէկ մը չեմ գիտեր, բայց լսած իս նախըլով, ամսական հինգ հազար բուպի եկամուտ ունի եղբք... բուպիկն սեպէ քի մեք մեծիտիէն ըսել է:

—Քա Սաթինիկ, ոսկիի դարձուք քի խելքս հասնի, ըսաւ Թագուկ հանրմ:

Յետոյ տններեցին դառնալով:

—Երկի Ֆրափայի անուշ մը չի՛նցիք. բէք խելախ բան հղաւ, մէյմէկ զգաւ քանեք:

—Հազար ոտիկ կ'ընէ, պատասխանեց Սաթենիկ :

—Անանկ է նէ, հայտէ դնա՛ սա անուշը ձեռքովդ բեր :

Երբ աղջիկը դուրս ելաւ, Թագուկ հանրմ շարունակեց :

—Եթտակը կ'ուզես նէ՛ տէր հայր՛ ատ Սարպը ըջբեանը ընաւ սերտս չըռնեց քայց կ'նչ ընեմ, Մարկոս էֆէնտին «հա» ըսաւ նէ «չէ» չըսի, շինակ քանի որ ատանկ շնորհքով մէկը կայ, նշանը ետ կ'ընենք կը լմննայ կ'երթայ... արդէն ի՞նչ տուած է որ, մատնի մը ի՛նչ պիլէ-զիկ. անոր համար ալ բերան քանայ նէ՛ ձեռքը կուտանք կը ճամբենք... կողոը տեսնայ իրեն ալ, բերած հէտիէնըռուն ալ երեսը... վո՛ւ՛ւ՛, պո՛ղ մարդը, մտթուծի կը նմանի :

Անուշէն յետոյ ճաշէր ատենը եկաւ եւ Թագուկ հանրմ հազար աղջանքներով ստիպեց զանաան օր միտսին ճաշէն Մեկնելու պահուն մայր եւ աղջիկ խօսք ասին իրմէ որ հետեւեալ առտու կանուխ գայ եւ Մարկոս էֆէնտին հետ տեսակցի վերջնական որոշումի մը յանգելու համար, թէեւ իրենք նոյն իրիկուն իսկ խոչործ պիտի բանային :

Տ. Միգրտիչ իր յաջողութենէն զհնոգցած փողոց ելաւ ու զէպի տուն ուղղուեցաւ յազթաւ կահօրէն անձրեւնոցը ճօճելով :

—Այս անգամ քու հախէա կուգամ, կ'ըսէր, խօսքը մտքէն կուլեանին ուղղելով :

Գանանային ծրագիրը, ինչպէս տեսանք, շատ պարզ էր. երեսակապկան փայլուն փեւացրուէ մը յոյսովը ետ ընել տալ կուլեանի ձեռքով կարգադրուած նշանաւորը :

Մայր ու աղջիկ, շլացած իր պարմութենէն, արդէն տրամադիր էին անմիջապէս ճամբու գնելու Մարտիրոս ազան, սակայն Մարկոս էֆէնտին կար տակաւին եւ Տ. Միգրտիչ կը պար որ անոնց չափ դիւրանաւ ան պիտի չըլլար, աւելի դրական, աւելի շօշափելի մանրամասնութիւններ պիտի պահանջէր :

Տ. Միգրտիչը ուրսխութիւնը կ'ամաց կ'ամաց տեղի տուաւ հետեւեալ օրը կերմնորեանի հետ ունենալիք տեկակցութեան պատճառած մրտահոգութեանց առջեւ եւ երբ տուն հասաւ գրեթէ գղջացած էր քիւնախոզորութեան աղջեցութեան տակ սարքած դասին համար :

Այսուհանդերձ ա՛լ կա չկարենալ դամալու չափ ստիպ մըստ էր գործը եւ հետեւեալ աստուտ ոտիկուեցաւ կերմնորեանեց տան ճամբան ձեռք առնելու, Մարկոս էֆէնտինի հեպաւ-

նենալիք տեսակցութենէն ծաղելիք չժաւարութիւններու մասին իր ծրագրերը կազմելէ ետքը :

ԵՐՈՒՍԼԻՑ ՕՏԵԱՆ

PROF. G. THOUMAIAN,
(Շարժող) CHIGWELL, LONDON.

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՒԹԵՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՈՒՆԻՆԻ ԳՆԱՂԱՔԱՐԻ ԳԱՅՔԱՐ. —

Վերջկերս բազմաթիւ նամակներ ընդունեցայ «Անահիտ»ի «Իրքեր եւ թերթեր» բաժնին նըկատմամբ : Թղթակիցներէս ոմանք զգանատիկ, զիսկ տալով թէ «անձնական պզտիկ խոչորներու վրայ վէճերը «Անահիտ»ին անարժան են» և ուրիշներ զհետեւակութիւն կը յայտնեն այն պայթարին համար զոր կը մղեմ՝ այդ բաժնին մէջ՝ մեր հանրային բարքերուն ցածաթեանը դէմ : Այսպեղ կ'ուզեմ օրինակել այդ նամակներէն երկաթը, մին գրուած կովկասցի հրագրագրէ մը, միւսը երկրպետանակ տանկահայ պրագմէ մը, եւ որոնց մին կը խըտացնէ զժողովներուն մասնումը եւ երկրորդը խրատադրուած զպատեմը :

«Անխտացե՛ք, կ'ընէ առասնայ բարեկամաբն անուններ տալ, մանաւանդ որ «Անահիտ»ը ամապիր է : Ամապիրը նայուած է ստորեայ զէպքերի վրայ աւելի մեծ հետաւորութիւնից քան օրակա թերթը. ուստի մանր մուրը գէպքեր եւ անձնաւորութիւնները չպիտի լինին իր ըզմանգաւթեան աւարկայ :»

Իսկ թըքահայ գրագէտը կ'ընէ՝ «Ալէն անգամ որ մեր invetéregած, գձուձ, զոհնիկ բարքերուն գէմ կը գրեն, սրտեւ կը խօսիս. courage պէտք է այդ պայթարը մղելու համար, բայց անինչ օգտակար պայթարն է առա :

Նս կը կարծեմ թէ թըքահայ գրագէտն է որ իբրեւեղ ունի : Ենէ արտասանմանի հայ լրագիրները մեր բարքերուն քննադատութիւնը լրջօրէն, անպատօրէն ու յարստեւարակատարէին, այի բարձր կատարելու, գո՛րձ որ իբրջ հանգէսի մը շրջանակին չի պատկանիր, բայց ոչ մէկ լրագիր այդ գործը չի կատարել կը գահպտցոյցի կերպով, ընդհակառակը՝ այդ լրագիրներէն շատերը աւելի քննադատելու արժանի եւ քան քննադատելու կարող Ազգի մը մէջ, ուր ամէն մէկ պէտքին գտնա-